

Գործարար շահերի պաշտպանության ցանցի տեղեկատու

Իրադարձություններ/Նորություններ/Հայտարարություններ /Հոդվածներ/Օրենսդրական փոփոխություններ
ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՐԿՐԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Գործարար շահերի պաշտպանության ցանցը անց կացրեց կլոր-սեղանի քննարկումներ մարզերում

Շամայնքի զարգացման քառամյա ծրագրի մշակում և կառավարում՝ թեմայով սեմինար

Կառավարությունը կապահովի գնումների ավելի թափանցիկ գործընթաց

Հավասար պայմաններ՝ բոլոր տնտեսավարողների համար

Խորհրդակցություն փոքր և միջին բիզնեսի ներկայացուցիչների հետ

Կայացել է Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի հերթական նիստը

Սեմինար ՓՄՁ-ների համար ՀՀ Առևտրաարդյունաբերական պալատում

Կառավարությունում շարունակվում են ՀՀ հարկային օրենսգրքի նախագծի վերաբերյալ քննարկումները

Տեղի է ունեցել Տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողովի նիստը

ԳՇՊՑ անդամները մասնակցել են Եվրոպական բիզնես հետևակարները, խոչընդոտները և հնարավորությունները

Գործարար շահերի պաշտպանության ցանցի կազմակերպած կլոր-սեղանի քննարկումները մարզերում

Մ.թ. հուլիս ամսին Գործարար շահերի պաշտպանության ցանցը սկսեց կլոր-սեղանի քննարկումների շարք ՀՀ մարզերում: Քննարկումների նպատակն է բացահայտել մարզերում գործարար համայնքի համար խնդրահարույց հարցերը, որը հնարավորություն կտա հաշվի առնել դրանք Ազգային գործարար օրակարգի /ԱԳՕ/ ձևավորման գործընթացի ընթացքում: Առաջին քննարկումները տեղի ունեցան Չարենցավան /Կոտայքի մարզ/ և Վայք /Վայոց Ձորի մարզ/ քաղաքներում: Քննարկումներն անցան արդյունավետ աշխատանքային մթնոլորտում: Վայք քաղաքում կայացած միջոցառմանը մասնակցեց նաև Մասնավոր ձեռնարկատիրության միջազգային կենտրոնի խորհրդատու Կ. Ստանիսլան, որը մասնակիցներին հանգամանորեն ներկայացրեց Ազգային գործարար օրակարգի մեթոդաբանությունն ու դրա իրականացման միջազգային փորձը տարբեր երկրներում: Քննարկումների ընթացքում ԳՇՊՑ-ի ներկայացուցիչները մասնակիցների ներկայացրեցին վերջերս ցանցի կողմից իրականացված հարցման արդյունքների հիման վրա ձևավորված ձեռնարկատիրությանը խոչընդոտող հիմնական հարցերի ցանկը, որի շուրջ էլ ծավալվեց բուռն քննարկումներ: Քննարկումների ընթացքում ՓՄՁ ներկայացուցիչները բրձրաձայնեցին իրենց տեսակետները ներկայացված հարցերի վերաբերյալ և առաջարկեցին համապատասխան լուծումներ: Քննարկումների արդյունքում ձևավորվեց գործարար համայնքի ներկայացուցիչների կողմից բարձրացված հարցերի փաթեթ, որը հետագայում կվերլուծվի ԳՇՊՑ-ի կողմից և հաշվի կառնվի ԱԳՕ-ի մշակման գործընթացի շրջանակներում: Գործարար շահերի պաշտպանության ցանցը կշարունակի քննարկումներն ու հանդիպումները գործարար համայնքի հետ նաև այլ մարզերում:

«Համայնքի զարգացման քառամյա ծրագրի մշակում և կառավարում» թեմայով ուսուցողական սեմինար Թումանյանում



Սույն թվականի մայիսի 18-19-ը, Թումանյան բազմաբնակավայր համայնքում տեղի ունեցավ «Համայնքի զարգացման քառամյա ծրագրի մշակում և կառավարում» թեմայով ուսուցողական սեմինար, որը կազմակերպվել էր ԳՇԳՑ անդամ Համայնքների ֆինանսիստների միավորման կողմից :

Սեմինարն անցկացվել է Համայնքների ֆինանսիստների միավորման (ՀՖՄ) կողմից իրականացվող «Աջակցություն Դիլիջան, Թումանյան և Տաթև համայնքների զարգացման քառամյա ծրագրերի մշակմանը և քննարկմանը» ծրագրի շրջանակներում, որը ֆինանսավորվում է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ) կողմից:

Սեմինարին մասնակցում էին Թումանյան բազմաբնակավայր համայնքի տեղական ինքնակառավարման մարմինները, համայնքի կազմի մեջ մտնող Լորուտ, Շամուտ, Մարց, Աթան, Ահնիձոր և Քարինջ բնակավայրերի վարչական ներկայացուցիչները, խորհրդակցական մարմնի անդամներ, ինչպես նաև համայնքի աշխատակազմի աշխատակիցներ: Սեմինարին հրավիրված և ներկա էին Լուկաշ Լուշերը, Արթուր Դրամփյանը, Արմեն Քելիշյանը: Նրանք իրենց գոհունակությունը հայտնեցին Թումանյան համայնքի ղեկավարին և աշխատակազմին նմանատիպ ծրագրերին մասնակցելու և հանրապետությունում որպես օրինակելի բազմաբնակավայր համայնք հանդես գալու համար:

Կառավարությունը կապահովի գնումների ավելի թափանցիկ գործընթաց



Մայիսի 26-ին տեղի ունեցավ ՀՀ կառավարության նիստ, որտեղ քննարկվել է գնումների գործընթացն ավելի արդյունավետ և ճիշտ կեչյով կազմակերպելու հարցը: Գնումների գործընթացում հնարավոր կոռուպցիոն ռիսկերի նվազեցման նպատակով Վարչապետը հանձնարարել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ առավել բարելավել թափանցիկությունն այդ գործընթացի տարբեր փուլերում, հնարավորություն ընձեռելով յուրաքանչյուր հետաքրքրվող անձի, էլեկտրոնային գնումների կայքէջում տեսնել՝ գնումների գործընթացների արդյունքում կնքված բոլոր պայմանագրերը, ինչպես նաև կնքված պայմանագրերի կատարման արդյունքները (ընդունման-հանձնման ակտեր, կատարողական ակտեր, հաշիվ ապրանքագրեր և այլն):

Ֆինանսների նախարարության Պետական գնումների պաշտոնական կայքէջի հաշվետվությունների բաժնում ամսական կտրվածքով տեղադրվելու է մանրամասն տեղեկատվություն նախորդ ժամանակահատվածում առավել հանախակի կատարված գնումների վերաբերյալ, օրինակ՝ վառելիք, գրասենյակային կամ տնտեսական նյութեր և այլն: Նշված հաշվետվություններում ներկայացվելու են տվյալ ապրանքի գծով տվյալ ամսվա ընթացքում ձևավորված նվազագույն և առավելագույն գները, հաղթողների առաջարկված միջին գները, այդ գների միջև ստանդարտ շեղումը և այլն, ինչպես նաև կարելի է տեսնել ըստ պատվիրատուների՝ առանձին գնման ժամանակ ստացված նվազագույն և առավելագույն գները ու հաղթողի առաջարկված գինը:

Այս կտրվածքով բացահայտված տեղեկատվությունը լավ հիմք է հանդիսանալու գնումների գործընթացի նկատմամբ հանրային վերահսկողության իրականացման համար: ՀՀ ֆինանսների նախարարությանը հանձնարարվել է նաև մշակել ծրագրային լուծում, որը հնարավորություն կընձեռի յուրաքանչյուրին էլեկտրոնային գնումների կայքէջում, ընտրելով հետաքրքրող պարամետրերը, ինքնուրույն ձևավորել հաշվետվությունները:



Ս.թ. հունիսի 2-ին կայացած ՀՀ կառավարության նիստում քննարկվել են նաև տնտեսական մրցակցության բարելավմանը նվիրված հարցեր: Վարչապետը նշել է, որ հանձնարարել է ՀՀ Էկոնոմիկայի նախարարությանը Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի հետ միասին քննարկել հանրապետությունում առկա մենաշնորհները, դրանց ազդեցությունն ազատ մրցակցային պայմաններ ունենալու վրա և ներկայացնել առաջարկներ: Քննարկումների արդյունքում պարզվել է, որ սոցիալական նշանակություն ունեցող կարևորագույն ապրանքային շուկաները, ինչպիսիք են շաքարավազի, ալյուրի, ցորենի, ձեթի, բրնձի, հնդկաձավարի, կարագի, մարգարիների, բանանի, նարնջի, մանկական սննդի, թռչնի մսի, դեղորայքի, բենզինի և դիզելային վառելիքի շուկաները, թեև ֆորմալ առումով մենաշնորհային չեն, սակայն, հանրության կողմից ընկալվում են որպես մենաշնորհ: Պատճառն այն է, որ այս ապրանքային շուկաներում առկա է կենտրոնացվածության բարձր աստիճան, ինչը բերում է այնպիսի ռիսկերի, ինչպիսիք են մրցակցության խաթարումը, փոքր և միջին ձեռնարկատերերի շուկայից դուրս մղումը և նորերի մուտքի սահմանափակումը, սպառողների շահերի ոտնահարումը, կոռուպցիան, գների անհիմն տատանումները և ի վերջո երկրում համախառն տնտեսական վնասի առաջացումը: Վարչապետը նշել է նաև, որ ընդհանրապես, յուրաքանչյուր ապրանքի շուկայում առկա են այդպիսի կենտրոնացվածության թե՛ յուրահատուկ և թե՛ առավել ընդհանրական պատճառներ, որոնցից ընդհանրականի հաղթահարմանն էլ պիտի առաջնահերթ ուղղված լինեն կառավարության ջանքերը:

Հանձնարարվել է Էկոնոմիկայի նախարարին՝ մեկամսյա ժամկետում մշակել հստակ ուղեցույցներ ներկայացված ապրանքների ներմուծման գործընթացների մանրամասն նկարագրմամբ: Դրանք պետք է ընդգրկեն բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, փորձաքննությունները, սերտիֆիկատները, վճարումները, ժամկետները, իրականացնող մարմինները, բողոքարկման կարգը և այլն: Ուղեցույցները պետք է գեներվեն Էկոնոմիկայի նախարարության, Ֆինանսների նախարարության, ՊԵԿ-ի, ինչպես նաև բոլոր առնչվող գերատեսչությունների կայքէջերում: Ուղեցույցները երկամսյա ժամկետում պետք է տեղադրվեն նաև անգլերեն և ռուսերեն լեզուներով: Հանձնարարվել է կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարին՝ մեկամսյա ժամկետում ներդնել թե՛ գծի ծառայություն՝ ներկայացված խնդիրների մասով ահազանգերի ստացման և դրանց արագ արձագանքներու նպատակով: Թե՛ գծի ստացված զանգերի վերահսկողությունը վերապետի վարչապետի վերահսկողական ծառայությանը: Թե՛ գծով ստացված տեղեկատվության և դրանց գծով ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ ամսական կտրվածքով հրապարակել ամփոփ տեղեկատվություն: Պետական իշխանության մարմինների կողմից նման խնդիրների վերաբերյալ տեղեկատվության ստացման դեպքում անհապաղ այդ մասին տեղեկացնել կառավարության աշխատակազմին:

Հանձնարարվել է Պետական եկամուտների կոմիտեի նախագահին և վարչապետի վերահսկողական ծառայությանը՝ օգոստոսի 1-ից սկսած ամսական կտրվածքով հրապարակել վերլուծական հաշվետվություններ ներմուծումների ժամանակ մաքսային ձևակերպումների ընթացքում նույնական մոտեցման վերաբերյալ՝ ըստ նշված ապրանքային շուկաների: Այստեղ ուշադրության կենտրոնում պետք է լինի բոլոր տնտեսավարողների համար հավասար պայմանների ապահովումը, իսկ յուրաքանչյուր չիմնավորված շեղում պետք է դառնա ծառայողական քննության առարկա: Հսկողության պատշաճ կատարման համար մեկամսյա ժամկետում ստեղծել անհրաժեշտ մեթոդաբանություն և մեխանիզմներ: Խնդրին համակարգային լուծում տալու նպատակով հանձնարարվել է Էկոնոմիկայի նախարարությանը և ՊԵԿ-ին քննարկել և երկամսյա ժամկետում ներկայացնել հայեցակարգ, թե ինչ լրացուցիչ կարգավորումներ պետք է կիրառել ներմուծում-մեծածախ վաճառք-մանրածախ վաճառք շղթայում, որը կբացառի խոշոր տնտեսավարողների կողմից ապրանքային շուկայում խաղի կանոնների թելադրումը:

Մասնավորապես, առաջարկվել է քննարկել վերոնշյալ սոցիալապես կարևոր ապրանքային շուկաներում նույն խոշոր տնտեսավարողի կողմից միաժամանակ մանրածախ և մեծածախ վաճառքով զբաղվելու արգելելու գաղափարը: Այդ պարագայում խոշոր տնտեսավարողը մեծածախ վաճառքը պետք է իրականացնի միայն պետականորեն հսկվող էլեկտրոնային հարթակի միջոցով, որտեղ վաճառքի պայմանները պետք է լինեն թափանցիկ և հավասար բոլոր ձեռքբերողների համար: Եվ եթե անգամ ներմուծող և մանրածախ առևտրով զբաղվող ընկերությունները փոխկապակցված են, միևնույն է, պետք է հարաբերվեն միայն այդ հարթակի միջոցով: Հանձնարարվել է «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» հիմնադրամին, համագործակցելով բոլոր առնչվող գերատեսչությունների հետ, եռամսյա ժամկետում ուսումնասիրել ներմուծման հետ առնչվող ընթացակարգերը և դրանց հնարավոր պարզեցման ուղղությամբ ներկայացնել առաջարկություններ, մասնավորապես՝ քննարկելով ինքնահայտարարման հնարավորությունների լայնացման, ինչպես նաև զանազան լաբորատորիաներից և ՊՈԱԿ-ներից ծառայությունների ձեռքբերման, սերտիֆիկատների տրամադրման պահանջները նվազագույնի հասցնելու հնարավորությունները: Այս խնդիրների ընթացիկ վերահսկողությունը դրվել է փոխվարչապետ Վաչե Գաբրիելյանի վրա:

Խորհրդակցություն կառավարությունում փոքր և միջին բիզնեսի ներկայացուցիչների հետ



Ս.թ. հունիսի 3-ին վարչապետի գլխավորությամբ տեղի է ունեցել խորհրդակցություն մասնավոր հատվածի, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության ներկայացուցիչների մասնակցությամբ տեղի է ունեցել Հարկային նոր օրենսգրքի նախագծի շուրջ խորհրդակցություն: Քննարկվել են նախագծով առաջարկվող փոփոխություններին վերաբերող հարցեր, մասնավոր հատվածի ներկայացուցիչները ներկայացրել են տարբեր առաջարկություններ և դիտարկումներ: Վարչապետը հանձնարարել է շահագրգիռ գերատեսչությունների և մասնավոր հատվածի մասնակցությամբ ներկայացված հարցերի վերաբերյալ անցկացնել լրացուցիչ քննարկում և դրա արդյունքները ներկայացնել կառավարություն:



Հունիսի 15-ին Վարչապետ Հովիկ Աբրահամյանի գլխավորությամբ կառավարությունում տեղի է ունեցել Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի հերթական նիստը, որին մասնակցել են քաղաքական ուժերի, քաղաքացիական հասարակության և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Օրակարգի առաջին հարցով ՀՀ արդարադատության նախարար Արվիհնե Հովհաննիսյանը և «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ Կարեն Չաղոյանը ներկայացրել են համատեղ աշխատանքային խմբի շրջանակում կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ համակարգի և աշխարհի տարբեր երկրների համանման փորձի ուսումնասիրության արդյունքները: Խմբում ընդգրկված են եղել ինչպես ՀՀ արդարադատության նախարարության, այնպես էլ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչներ, այդ թվում՝ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) հակակոռուպցիոն կոալիցիայի ներկայացուցիչներ: Խորհրդի անդամներին ներկայացված գեկույցում հանգամանալից անդրադարձ է եղել կոռուպցիայի դեմ պայքարի մարմինների ձևավորման միջազգային փորձին և միջազգային մի շարք փաստաթղթերով սահմանված հիմնարար սկզբունքներին, որոնք ուղղված են հակակոռուպցիոն մարմինների անկախության ու արդյունավետության ապահովմանը: Նշվել է, որ ուսումնասիրության արդյունքներն ի մի բերելով՝ աշխատանքային խումբը երկու տարբերակ է առաջարկում. Հայաստանում ստեղծել հակակոռուպցիոն ունիվերսալ անկախ մարմին, որը կներառի երեք բաղադրիչ՝ քննչական, կրթական և կանխարգելիչ, կամ հակակոռուպցիոն անկախ մարմին, որը կունենա կանխարգելիչ և կրթական գործառնություններ, ինչպես նաև առանձին քննչական մասնագիտացված մարմին: Հաշվի առնելով մեր երկրի հնարավորությունները և ռեսուրսների մոբիլիզացիայի կարևորությունը՝ երկու մարմնի պարագայում էլ առաջարկվում է օգտագործել ՀՀ հատուկ քննչական ծառայության և ՀՀ բարձրատիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի կարողությունները: Արվիհնե Հովհաննիսյանը նաև նշել է, որ երկու մոդելների դեպքում էլ անհրաժեշտ է առաջ շարժվել գործիքակազմի համապարփակ տրամադրման սկզբունքով: Հարցի առնչությամբ ծավալվել է մտքերի փոխանակություն, հնչել են մի շարք կարծիքներ և առաջարկություններ:

Հաջորդիվ Կարեն Չաղոյանը ներկայացրել է պետական գնումների ոլորտում իրական սեփականատերերի ինստիտուտի ներդրման և օֆշորային գոտիներից պետական գնումներին մասնակցության արգելքի սահմանման հարցը: Նա նշել է, որ հարցը բարձրացվել է բիզնես ասոցիացիաների և ՔՀԿ-ների հետ աշխատանքային քննարկումների ընթացքում՝ որպես կոռուպցիոն ռիսկեր պարունակող հրատապ խնդիր: Ներկայացնելով կատարված ուսումնասիրության արդյունքները՝ Կարեն Չաղոյանը նշել է, որ օֆշորային գոտիներից բխող հիմնական վտանգն այն է, որ շատ ընկերություններ, որոնց սեփականատերերը հայտնի չեն, օֆշորային գոտիներում գրանցվելով՝ Հայաստանում հաղթում են պետական գնումների մրցույթներ: Նրա խոսքով՝ նաև Վերահսկիչ պալատի բացահայտումներից պարզ է դառնում, որ հիմնականում ոչ ռեզիդենտ կամ օֆշորային գոտում գրանցված կազմակերպություններն ստեղծվել են արհեստականորեն՝ գնումների մասնակցելու համար, իսկ ՀՀ օրենսդրությամբ որևէ արգելք նախատեսված չէ, և օֆշորային գոտիներում գրանցված կազմակերպությունները կարող են մասնակցել պետական գնումներին: Գնումներում թափանցիկությունն ու հաշվետվողականությունը բարձրացնելու և կոռուպցիայի մակարդակը նվազեցնելու համար որպես լուծման տարբերակ առաջարկվում է, որպեսզի կառավարությունը պարտադրի իր հետ պայմանագիր կնքել ցանկացող կազմակերպություններին բացահայտել իրական սեփականատերերին, ինչպես նաև պետք է վերջիններիս վերաբերյալ ինֆորմացիան հանրայնացվի անվճար հիմունքներով: Չեկուցողը նշել է, որ նշված մոտեցման կիրառման վերաբերյալ միջազգային փորձի ուսումնասիրությունը և արձանագրված վիճակագրությունը վկայում են կոռուպցիայի մակարդակի նվազման մասին:

Այնուհետև գեկույցումով հանդես է եկել «Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ի թղթակից Սառա Պետրոսյանը, ով ներկայացրել է «Օտարումների գործընթացի օրինականության ապահովում» և «Անուրդների իրականացման գործընթացը տեղական ինքնակառավարման մարմիններում» հետազոտությունների արդյունքները: Նա անդրադարձել է Հայաստանի Հանրապետությունում հետազոտության առարկա հանդիսացող ոլորտում գործող օրենսդրության, աճուրդների հրապարակայնության ապահովման, հայտարարությունների բովանդակության օրենսդրական պահանջի կիրառման, աճուրդների իրականացման ընթացակարգի և այն խախտելու օրենսդրական հետևանքների, փակ և դասական աճուրդների, աճուրդի մեկնարկային գնի և այլ հարցերի կապակցությամբ բացահայտված բացթողումներին և աճուրդի գործընթացի կազմակերպման խախտումներին: Ներկայացնելով իր առաջարկությունները՝ Սառա Պետրոսյանն առաջնահերթ է համարել աճուրդների իրականացման գործընթացը կարգավորող օրենսդրության բարելավումը՝ վերացնելով օրենքների և ենթաօրենսդրական ակտերի միջև առկա հակասություններն ու թերությունները, աճուրդների իրականացման օրինակելի կանոնակարգի մշակումը՝ պարտադիր բոլոր համայնքների համար, աճուրդներ իրականացնող մասնագիտացված կառույցի ստեղծումը, համայնքային գույքի օտարման, կրկնաճուրդների գործընթացի արդյունավետ կազմակերպումը, հնարավորինս լայն իրազեկումը և այլն: Օրակարգային հարցերի շրջանակում «Թրանսպարենտի ինթերնեշլ հակակոռուպցիոն կենտրոն» (ԹԻՀԿ) ՀԿ-ի փոխտնօրեն Սոնա Ավագյանը ներկայացրել է «Պաշտպանության համակարգի հակակոռուպցիոն համաթիվ 2015թ.» գլոբալ ուսումնասիրության շրջանակում ՀՀ պաշտպանության համակարգի ռիսկերի գնահատումը: Որպես իրականացված հետազոտության եզրակացություն՝ առաջարկվում է բարձրացնել համակարգի թափանցիկությունը և արդյունավետությունը, ինչն անհրաժեշտ է հասարակության և զինված ուժերի միջև վստահության ամրապնդման և բյուջեի ծախսման առավելագույն արդյունավետության համար:

Չեկույցով է հանդես եկել նաև ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Արա Նազարյանը, ով ներկայացրել է ՀՀ պաշտպանության նախարարության ոլորտում Հյուսիսատլանտյան դաշինքի (ՆԱՏՕ) հետ համագործակցության շրջանակում իրականացվող բարեվարքության (բարեխղճության) ամրապնդմանն ուղղված գործողությունների ծրագրի ընթացքը և իրականացվող գործողությունները:

Ամփոփելով հարցի շուրջ ծավալված մտքերի փոխանակությունը՝ վարչապետն ընդգծել է, որ մեր երկրի անվտանգության արդյունավետ ապահովումը պայմանավորված է նաև կոռուպցիոն ռիսկերի նվազեցմամբ, և այդ գործընթացը պետք է շարունակական լինի: Կառավարության ղեկավարը նշել է, որ ԹԻՀԿ ուսումնասիրության արդյունքները կարող են օգտակար լինել ՀՀ պաշտպանության նախարարությանը կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանն ուղղված ծրագրերում և նախաձեռնություններում:

ՓՄՁ-ների վերապատրաստման սեմինար «Առևտրա-արդյունաբերական պալատում



Հունիսի 28-30-ը Եվրամիության կողմից ֆինանսավորվող «Արևելյան ներդրումներ 2» (East Invest 2) ծրագրի շրջանակներում ՀՀ առևտրաարդյունաբերական պալատում կայացավ ՓՄՁ-ների վերապատրաստում հետևյալ ուղղություններով՝

- Տեղական արտադրանքի արտահանումը ԵՄ շուկա
- ԵՄ առևտրային կապերի ակտիվացում
- Մարկետինգ
- Մասնակցություն ցուցահանդեսներին
- Տեխնիկական ստանդարտներ

Սեմինարը ողջույնի խոսքով բացեց ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի նախագահ Մարտին Սարգսյանը, ով ըստ արժանվույն գնահատեց այսպիսի սեմինարների կարևորությունը՝ դրանք գործարարի համար բնութագրելով որպես կենդանի դասագիրք: Պարոն Սարգսյանը միաժամանակ հավելեց, որ մեր հանրապետությունում հատկապես փոքր և միջին բիզնեսն է ավելի շատ կարիք գգում գորակցության, ինչին էլ նպատակամիտված է նաև այս հանդիպումը: Մարտին Սարգսյանը միաժամանակ հավաստիացրեց, որ ՀՀ առևտրաարդյունաբերական պալատը մշտապես պատրաստակամ է աջակցելու ԵՄ-ի նման ծրագրերին:

Հանրապետության Էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ Գարեգին Մելքոնյանը նշեց, որ Կառավարության առաջնային մտահոգության խնդիրներից է փոքր և միջին բիզնեսին աջակցելը, ինչը տնտեսական ռազմավարության կարևորագույն դրույթներից է:

Դասընթացը վարեցին Եվրոպայից ժամանած 5 փորձագետ: Դասընթացի նպատակն էր աջակցել գյուղմթերքի վերամշակման ոլորտում գործող ՓՄՁ-ներին ԵՄ շուկա մուտք գործելու, համապատասխան գործարարների հետ համագործակցելու հարցում, ինչպես նաև արտահանման ոլորտում տեղական գործարարների վերապատրաստումը: Դասընթացը աջակցեց գործարարներին ձեռք բերել գիտելիքներ, բարձրացնել իրազեկվածությունը և ստանալ որոշակի պատասխաններ ԵՄ արտահանման հետ կապված տարբեր հարցերի վերաբերյալ: Ծրագրի ավարտին սեմինարի մասնակիցներին հանձնվեցին մասնակցության սերտիֆիկատներ:

Խորհրդակցություն ՀՀ Հարկային նոր օրենսգրքի նախագծի շուրջ



Հուլիսի 2-ին Վարչապետ Հովիկ Աբրահամյանի գլխավորությամբ կառավարությունում շահագրգիռ գերատեսչությունների ղեկավարների և ներկայացուցիչների մասնակցությամբ տեղի է ունեցել Հարկային նոր օրենսգրքի նախագծի շուրջ խորհրդակցություն: Բացելով խորհրդակցությունը՝ կառավարության ղեկավարը նշել է, որ Հարկային նոր օրենսգրքի նախագծի վերաբերյալ տարբեր հարթակներում և տարբեր ձևաչափերով տեղի են ունեցել բազմաթիվ քննարկումներ, որոնք կրում են շարունակական բնույթ: Հովիկ Աբրահամյանը, մասնավորապես, անդրադարձել է խորհրդարանում Հարկային նոր օրենսգրքի նախագծի շուրջ ակտիվ քննարկումներին, նշելով, որ բարձրաձայնված բոլոր առաջարկություններն ու խնդիրները պետք է մանրամասն վերլուծվեն և դառնան քննարկման առարկա:

Այնուհետև անդրադարձ է կատարվել նախագծով առաջարկվող փոփոխություններին վերաբերող մի շարք դրույթների, ներկայացվել են տարբեր առաջարկություններ և դիտարկումներ, տեղի է ունեցել մտքերի շահագրգիռ փոխանակություն: Նիստին մասնակցել են նաև ԳՇԳՑ անդամ կազմակերպություններ:



Հուլիսի 4-ին կառավարությունում տեղի է ունեցել ՀՀ Տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողովի նիստ: Հանձնաժողովը քննարկել է Պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների զանգատարկման հանձնաժողովի ընդունած որոշումների դեմ երկու հայտ: Ներկայացված հիմնավորումները և փաստարկները քննարկելուց հետո հանձնաժողովը որոշում է կայացրել բավարարել ընկերություններից մեկի բողոքը, իսկ մյուսինը՝ մերժել:

ԳՇՊՑ անդամները մասնակցել են "Եվրոպական բիզնես հեռանկարները, խոչընդոտները և հնարավորությունները Հայաստանում" համաժողովին



Հուլիսի 7-ին կայացել է «Եվրոպական բիզնես հեռանկարները, խոչընդոտները և հնարավորությունները Հայաստանում» խորագրով համաժողովին, որը կազմակերպել է Եվրոպական բիզնես ասոցիացիան, որին մասնակցել են նաև ԳՇՊՑ անդամները: Միջոցառմանը ներկա է գտնվել նաև ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանը, որը ողջունելով ներկաներին՝ կարևորել է նման միջոցառումների անցկացումը և նշել հետևյալը. «Գործարար համայնքի, ինչպես նաև տնտեսական քաղաքականություն մշակող պատասխանատուների լայն ներկայացվածությունն այս միջոցառմանը, թույլ է տալիս կանխատեսել ակտիվ ու կառուցողական քննարկում բոլորիս հուզող հարցերի շուրջ: ՀՀ կառավարությունը շարունակական քաղաքականություն է իրականացնում գործարար միջավայրի տեսանկյունից Հայաստանն առավել գրավիչ երկիր դարձնելու ուղղությամբ: Մենք հոչակել և հետևողականորեն իրականացնում ենք «բաց դռների» քաղաքականություն՝ չկիրառելով գրեթե ոչ մի սահմանափակում ներդրումային գործունեության նկատմամբ: Գործարար միջավայրի բարելավմանն ուղղված մեր քայլերը բարձր են գնահատվում միջազգային հեղինակավոր կազմակերպությունների կողմից: Մենք իրականացնում ենք քաղաքականություն, որի նպատակն է ապահովել հավասար պայմաններ բոլորի համար: Օտարերկրյա ընկերությունները պետք է իրենց հարմարավետ և ապահով զգան Հայաստանում:

Հայաստանը կարող է յուրահատուկ կամուրջ հանդիսանալ Եվրասիական տնտեսական միության և Եվրամիության անդամ երկրների միջև՝ մի կողմից հաշվի առնելով Հայաստանի՝ Եվրասիական տնտեսական միության անդամակցությունից բխող, մյուս կողմից՝ Եվրամիության հետ առևտրում GSP+ արտոնյալ առևտրային ռեժիմից օգտվելու հնարավորությունները: Արտոնյալ GSP առևտրային ռեժիմ ունենք նաև Կանադայի, Շվեյցարիայի, Ճապոնիայի և Նորվեգիայի հետ: Մեկ այլ հնարավորություն է Հայաստանի Հանրապետության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարությունների միջև վերջերս ստորագրված առևտրի և ներդրումների մասին շրջանակային համաձայնագիրը, որով ստեղծվում են բարենպաստ պայմաններ ներդրումների և երկու երկրների միջև ապրանքաշրջանառության, առևտրի խրախուսման համար: Մենք առանձնահատուկ ուշադրություն ենք դարձնում ներդրումային ծրագրերին՝ նպատակ ունենալով աջակցել նոր աշխատատեղերի ստեղծմանը, ներդրումների ներգրավմանը՝ առաջարկելով գործարարներին արտոնությունների լայն շրջանակ: Այս համատեքստում, վստահ եմ, որ Եվրոպական բիզնես ասոցիացիայի գործունեությունը Հայաստանում ևս իր նպատակը կբերի ներդրումների ներգրավման, գործարար համայնքի շահերի ներկայացման և պետություն-մասնավոր երկխոսության զարգացման տեսանկյունից: Ամփոփելով խոսքս՝ մտադրում եմ ձեզ հաջողություն և արդյունավետ գործունեություն»:

